Ապառաժ

Հիմնադրված է 1991 թվականին: 19 (360) 1-17 նոյեմբեր, 2014թ.

ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ՀՅ Դաշնակցության Արցախի Կենտրոնական Կոմիտեի պաշտոնաթերթ

Մենք համացանցում

www.aparaj.am

Խմբագրական

Իրավական երկիր լինելու ապացույց

Ե՛վ հայկական, ե՛ւ ադրբեջանական, ե՛ւ միջազգային լրատվամիջոցների ուշադրության կենտրոնում է ԼՂՀ պետական սահմանն ապօրինի հատած ադրբեջանցի դիվերսանտների դատավարությունը, որն ընթանում է Արցախի մայրաքաղաք Ստեփանակերտում:

Դատական պատասխանատվությունը Ադրբեջանի քաղաքացիներ Շահբազ Գուլիեւի ու Դիլհամ Ասկերովի նկատմամբ, ովքեր մեղադրվում են Քարվաճառի 17-ամյա բնակիչ Սմբատ Ցականյանի, ՊԲ զինված ուժերի սպա Սարգիս Աբրահամյանի սպանությունների, Քարվաճառի մեկ այլ բնակչի՝ Կարինե Դավթյանին ծանր վիրավորելու, պետական սահմանն ապօրինի հատելու, ինչպես նաեւ մի շարք այլ հոդվածներով՝ կարեւորվում է այն հանգամանքով, որ Արցախի անկախության տարիներից ի վեր սա առաջին դեպքն է, որ ԼՂՀ պետական սահմանի հատման համար Ադրբեջանի քաղաքացիները կանգնում են դատարանի առջեւ:

Դատավարությունն ընթանում է՝ համաձայն ԼՂՀ Օրենսդրության, միջազգային նորմերին համապատասխան՝ պահպանելով մարդու իրավունքների միջազգային հռչակագրերում ամրագրված բոլոր դրույթները, ինչն ապացուցում է Արցախի Հանրապետության իրավական պետություն լինելու հանգամանքը: Սա, անտարակույս, կարեւոր է ԼՂՀ-ի՝ միջազգային ասպարեզում քաղաքական վկանիշի բարձրացման, օրենսդրության եւ իրավական ակտերի միջազգային նորմերին համապատասխանության ապացուցման տեսանկյունից:

Մեղադրյալներին, ԼՂՀ օրենսդրության համաձայն, տրամադրվել են դատապաշտպաններ, թարգմանիչ: Պետք է կարեւորել, որ Արցախում թե՛ նախաքննության, թե՛ դատաքննության ընթացքում չի խախտվում ադրբեջանցիների մարդկային իրավունքները, ինչը, հիրավի, երաշխավորված չէ անգամ իրենց հայրենիքում՝ մարդու իրավունքների խախտման համար միջազգային կազմակերպությունների կողմից բազմիցս քննադատության արժանացած Ադրբեջանում, եւ դա, անշուշտ, զարմանալի է մեր հարեւան տխրահռչակ երկրի քաղաքացիների համար: Մեղադրյալներն իրենք են նշում, որ իրենց հանդեպ կիրառվում է պատշաճ վերաբերմունք:

Ադրբեջանը բազմիցս ցույց է տվել, որ միայն ընդունակ է անմարդկային վերաբերմունք կիրառել ոչ դիտավորյալ հայ-ադրբեջանական սահմանը հատած հայերի նկատմամբ:

Այս օրերին,սակայն, պաշտոնական Բաքուն իրեն հատուկ զեղծարարության գործելաոճով է զբաղվում, դիմում է միջազգային մի շարք կազմակերպությունների՝ պահանջելով անօրինական համարել իր քաղաքացիների հանդեպ կիրառվող մեղադրանքները՝ սրանով միայն ու նորից փաստելով իր՝ միջազգային նորմերին խորթ երկիր լինելու հանգամանքը:

Նշենք, որ Ադրբեջանի քաղաքացի Հասան Հասանովը եղել է Ադրբեջանի Ազգային անվտանգության աշխատակից, ինչը բավական է փաստելու, որ դիվերսանտները գործուղվել են ադրբեջանական իշխանությունների կողմից: Պատահական չէ, որ Ադրբեջանը միշտ էլ դեմ է եղել սահմանային միջադեպերի հարցով անկախ հետաքննություն անցկացնելուն:

Իրենք՝ մեղադրյալները, նշում են, որ սա իրենց առաջին սահմանային խախտումը չէ, որ սկսած 2005 թվականից՝ բազմիցս եղել են Արցախում: Այստեղ հատկանշական է, որ մեղադրյալները չեն ընդունում, որ իրենք պետական սահման են խախտել, այլ շեշտում են, այսպես ասած «իրենց հայրենիքում» լինելու հանգամանքը: Այլ պատասխան ակնկալել չէր էլ կարելի կեղծիքի, ապօրինությունների եւ ստի վրա հիմնված երկրում ապրող քաղաքացիներից:

Այս ամենից ելնելով՝ մենք հնարավորություն ունենք պետականորեն մեղադրել Ադրբեջանին՝ դիվերսիոն գործողության կազմակերպման ու անմեղ քաղաքացիների կյանքը վտանգելու համար:

Ընթացող դատավարության արդյունքում՝ մեղադրյալները պատասխանատվության կենթարկվեն, ու սա գուցե դաս չլինի հարեւան Ադրբեջանի համար, բայց այս գործընթացով մենք ապացուցում ենք, որ մեզ համար առաջնայինը մեկն է՝ Արցախը իրավական երկիր է, եւ օրենքն է մեր գործողությունների հիմնաքարը:

Միջազգային անդրադարձը եւ իրական փաստերը

Նոյեմբերի 12-ին արցախա-ադրբեջանական սահմանի արեւելյան հատվածի օդային տարածքում, ուսումնավարժական թռիչքի ժամանակ, խախտելով հրադադարի ռեժիմը, ադրբեջանական ՀՕՈՒ-ի կողմից խոցվել է ԼՂՀ ՌՕՈՒ ՄԻ-24 ուղղաթիռը:

Հակառակորդը, սակայն, տարբեր տրամաչափի հրաձգային զենքերից ինտենսիվ կրակ է վարում դեպքի վայրի ուղղությամբ՝ չթողնելով մոտենալ կործանված ուղղաթիռին:

Կարեւոր է նկատել Արեւմտյան քաղաքական շրջանակների եւ լրատվամիջոցների անդրադարձն այս դեպքին: Հայտարարություններում զսպվածության կոչեր են հնչում ու մտահոգություններ՝ սառեցված հակամարտության վերսկսման վերաբերյալ: Մասնավորապես, ԵԱՀԿ գլխավոր քարտուղարը մտահոգություն է հայտնել, որ ուղղաթիռի կործանումը սառեցված հակամարտության սրման լուրջ վտանգ է ներկայացնում, իսկ Եվրամիության տարածած հայտարարության մեջ ասվում է. «Կարեւոր է, որ կողմերը զսպվածություն ցուցաբերեն, զերծ մնան այնպիսի գործողություններից ու հայտարարություններից, որոնք կարող են սրել իրավիճակը: Ավելին, կոչ ենք անում հետաքննություն անցկացնել միջադեպի շուրջ»:

Դեպքին անդրադարձել են նեւ ՆԱՏՕ-ն եւ ԱՄՆ պետքարտուղարությունը:

Վերջերս Փարիզում Ֆրանսիայի նախագահի նախաձեռնությամբ կայացած Սարգսյան-Ալիեւ հանդիպման ֆոնին այս լարվածությունն անտրամաբանական է թվում, հատկապես հաշվի առնելով, որ դրանից հետո կողմերը դրական են գնահատել հանդիպումը, եւ նշվում էր անգամ բանակցային գործընթացում որոշակի առաջընթացի մասին: Փարիզյան հանդիպումը, իսկ մինչ այդ Քերի-Սարգսյան-Ալիեւ հանդիպումը, կարելի է ասել, գլոբալ առումով՝ Արեւմուտքի փորձն էր՝ ուղղված Արցախյան խնդրի կարգավորման հարցում իր դիրքերի ամրապնդմանը:

Դեպքերի նման զարգացման վերաբերյալ Արեւմուտքի մտահոգությունը կարելի է բացատրել սեփական շահերը վտանգելու հնարավորության հանգամանքով, այսինքն՝ արցախյան խնդրում իր դիրքերի խարխլմամբ կամ թուլացմամբ:

Այս առումով հետաքրքրական է ԵԱՀԿ Մինսկի խմբի ամերիկացի համանախագահ Ջեյսմ Ուորլիքի՝ Twitter-ի էջում կատարած գրառումը. «Ղարաբաղում լայնածավալ կոնֆլիկտը չի բխում ոչ ոքի շահերից: Երկու կողմերն էլ պետք է խուսափեն իրավիճակի սրումից եւ հրաժարվեն պատերազմի՝ որպես հարցի լուծման միջոցից»: Ուորլիքի տեսակետը բավականին ուշագրավ է, քանի որ կարելի է դրանից շատ ենթադրություններ անել: Տարօրինակ է, որ ռուսական քաղաքական շրջանակները դեպքի վերաբերյալ անսպասելի լռություն են պահպանում:

Միջազգային հանրությունը, հատկապես ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ երկրները, պետք է մի բան լավ հասկանան՝ չպետք է կողմերի միջեւ հավասարության նշան դնել, ու ցանկացած միջադեպ պետք է լրջորեն քննության առնվի, որպեսզի խուսափենք իրավիճակի նման սրումից:

Ուղղաթիռի կործանումը սրեց տեղեկատվական դաշտի պատերազմը: Ադրբեջանը, իրեն հատուկ կեղծարարության քաղաքականությամբ, սկսեց կեղծ լուրեր տարածել: Համարյա թե բոլոր առաջատար միջազգային լրատվամիջոցները, այդ թվում՝ BBC-ն, Euronews-ը, France 24-ը, Ռուսաստանը իրենց կարեւոր նորությունների շարքում անդրադարձել են ուղղաթիռի կործանմանը՝ հիմնականում նշելով ադրբեջանական սուտ լրատվությունն այն մասին, իբր հայկական ուղղաթիռները խախտել են սահմանը եւ կրակ են բացել ադրբեջանական դիրքերի ուղղությամբ: Այդ ամենը մտահոգություն է առաջացնում, քանի որ ապացուցում է, որ տեղեկատվական դաշտում մենք մեծ անելիքներ ունենք:

Ադրբեջանական լրատվամիջոցների հրապարակած տեսանյութը հստակ ապացուցում է իրենց իսկ լրատվության սուտ լինելը, քանի որ տեսանյութում հստակ երեւում է, որ հայկական երկու ուղղաթիռները թռիչքն իրականացնում են ադրբեջանական դիրքերից բավականին հեռու, այն էլ՝ դիրքերին ոչ թե ուղղահայաց, այլ՝ հորիզոնական՝ որեւէ կրակ չբացելով դեպի հակառակորդի դիրքերը: Նրանք նույնիսկ չեն պատասխանել ադրբեջանական կողմից արձակված կրակին: Սա ոչ միայն ապացուցում է ադրբեջանական ապատեղեկատվությունը, այլեւ այն, որ ուղղաթիռը զինված չի եղել եւ թռիչքը կրում էր զուտ ուսումնավարժական բնույթ: Դա է հավաստում նաեւ այն, որ ադրբեջանական կողմը կրակ է բացել կործանված ուղղաթիռի ուղղությամբ եւ չի թողնում, որպեսզի հայկական ուժերը մոտենան ուղղաթիռին, քանի որ այդ դեպքում կտարվի համապատասխան հետաքննություն, ինչը կապացուցի ադրբեջանական կողմի կեղծիքը:

Դ. Իշխանյան. «Ակնկալում եմ, որ համարժեք պատասխանը չի ուշանա»

Արցախի ՀՅԴ ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանի կարծիքով՝ ադրբեջանական զինված ուժերի կողմից ԼՂՀ ՌՕՈՒ «ՄԻ-24» ուղղաթիռի խոցման համար պատասխանատու են թե՛ Ադրբեջանի իշխանությունը, թե՛ ԵԱՀԿ Մինսկի խումբը:

«Այս ապակայունությունն Ադրբեջանը ստեղծում է իր քաղաքական շահերի համար, սակայն որքան Ադրբեջանի իշխանություններն են պատասխատու տվյալ իրավիճակի համար, այնքան էլ պատասխանատու են միջազգային կառույցները, մասնավորապես ԵԱՀԿ Մինսկի խումբը, որը երբեք համարժեք գնահատական չի տալիս Ադրբեջանի սանձարձակություններին եւ համապատասխան քայլեր չի ձեռնարկում նման իրավիճակներից խուսափելու համար»,- նշեց Դավիթ Իշխանյանը:

Նա շեշտեց, որ հայկական կողմը սահմանի խախտում չի արել, որի համար արդեն բազում փաստեր կան: Ադրբեջանական կողմը հիմք չի ունեցել հայկական օդուժին պատկանող ուղղաթիռը խոցելու:

«Ադրբեջանը միշտ փորձում է ապակայունացնող միջոցներով իրավիճակը լարել, որին ականատես ենք եղել այս տարվա օգոստոսին, սակայն հայկական կողմը համարժեք պատասխան է տվել: Այս դեպքում էլ, կարծում եմ, համարժեք պատասխանը չի ուշանա, եւ, ինչպես արդեն ՀՀ ՊՆ մամուլի խոսնակ Արծրուն Հովհաննիսյանն է ասել, հետեւանքները ադրբեջանական կողմի համար շատ ցավոտ կլինեն»,- ասաց ՀՅԴ ԿԿ ներկայացուցիչ Դավիթ Իշխանյանը:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Ժողովուրդն է իր ձայնի ու երկրի տերը

Շուրջ մեկ տարի է, ինչ՝ հիմնականում հայաստանյան լրատվական դաշտում ժամանակ առ ժամանակ խոսվում է ԼՂՀ ապագա նախագահական ընտրությունների եւ ապագա հավանական նախագահի մասին հարցերից՝ չնայած ԼՂՀ նախագահական հերթական ընտրությունները կայանալու են երեք տարի հետո: Հետաքրքրական է այն, որ առջեւում դեռ 2015 թվականի ԼՂՀ խորհրդարանական ընտրություններն են, ինչը, սակայն, փորձում են ստվերի տակ գցել՝ 2017-ին ԼՂՀ-ում կայանալիք նախագահական ընտրություններին առավել կարեւորություն տալով:

Հարց է առաջանում՝ ո՞ւմ է ձեռնտու այս վիճակը, ովքե՞ր են շահագրգռված 2017թ. ԼՂՀ նախագահական ընտրությունների այստեսակ քննարկումներով:

ԼՂՀ առաջիկա նախագահական ընտրությունների վերաբերյալ հայաստանյան ԶԼՄ-ները հատկապես քննարկում են ԼՂՀ երկրորդ նախագահ Արկադի Ղուկասյանի անունը, եւ թվում է՝ հստակ պարբերականությամբ փորձում են թարմ պահել այս լրատվությունը:

Այս եւ այլ հարցերի շուրջ մեր թղթակիցը զրուցել է երիտասարդ սերնդի ներկայացուցիչ, գործարար Սեւակ Խաչատրյանի հետ:

- Պարոն Խաչատրյան, շուրջ երեք տարի հետո են կայանալու ԼՂՀ նախագահական ընտրությունները, բայց այսօր քննարկման թեմա է այն, խոսվում է հավանական թեկնածուների մասին: Հայաստանյան ԶԼՄ-ները հիմնականում շոշափում են նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի անունը: Ի՞նչ կասեք այս մասին. կարծում եք՝ նա իրո՞ք ցանկալի թեկնածու է, թե՞ ինչ-որ շրջանակի շահարկման առարկա:

- Նախ ասեմ, որ անհամբեր չեմ սպասում 2017 թվականին կայանալիք նախագահական ընտրություններին: Այսօր մենք շատ գործ ունենք անելու եւ բազում խնդիրներ կան լուծելու: Կարծում եմ՝ ճիշտ կլիներ զբաղվել առօրյա հարցերով: Իսկ ինչ վերաբերում է նախկին նախագահ Արկադի Ղուկասյանի հավանական վերադարձի եւ նախագահի թեկնածու առաջադրվելուն, կարծում եմ, ճիշտ կլիներ փակել անցյալի էջերը եւ նայել ու քայլել առաջ: Իրականում՝ հավատում եմ նոր փոփոխություններին: Վստահ եմ, որ Արցախում արժանի թեկնածուների պակաս չի լինի: Արցախցին նոր մտքի, գաղափարի, ծրագրի կարիք ունի:

- Այսինքն՝ բացառո՞ւմ եք նախկին նախագահի վերադարձը:

- Ամեն պարագայում, յուրաքանչյուր արցախցու վերադարձն Արցախ՝ ողջունելի է. լավ կլինի՝ ընդհանրապես չթողնել Արցախը: Պետական պաշտոններ զբաղեցրած անձինք իրենց հեղինակությունն ու ձեռք բերած վաստակը պահելու համար անհրաժեշտ է, որ պաշտոնավարության ավարտից հետո եւս բնակվեն Արցախում: Արցախի նոր նախագահին ընտրելու է Արցախի նոր սերունդը:

Գիտեք, Արցախում նոր սերունդ է ձեւավորվել, որոնց համար անցյալի ձեւավորված փոխընբռնումներն ու այդ հիման վրա ստեղծված կառավարման համակարգերն այլեւս ընդունելի չեն: Նոր ձեւավորված սերունդն իր վճռական խոսքը պետք է ունենա երկրի ապագան կառուցելու գործում:

Մի քանի օր առաջ այս հարցին անդրադարձել է ԼՂՀ նախագահի մամլո խոսնակ Դավիթ Բաբայանը: Անկեղծորեն ասեմ՝ կցանկանայի, որ մեր երկրում շատերը նրա պես մտածեին: Ինձ համար ոգեւորիչ էր պարոն Բաբայանի պատասխանը: Նա նշել էր, որ ԼՂՀ-ն Հայաստանի մարզ չէ, որ ինչ- որ մեկը նշանակի կամ էլ «դաբրո» տա. ժողովուրդն է որոշում՝ ում կտա իր ձայնը:

- Իսկ դուք, որպես Արցախի երիտասարդ քաղաքացի, ո՞ւմ հետ եք կապում ձեր եւ երկրի ապագան:

- Միայն՝ Դաշնակցության: Ես, շուրջ 10 տարի է, այս կուսակցության հետ եմ, եւ նրա ծրագրերի ու գաղափարախոսության հետ եմ կապում մեր երկրի սպասված ապագան:

«ԱՊԱՌԱԺ»

10-րդ միջխորհրդարանական նիստն առանձնացել է իր արդյունավետությամբ

Նոյեմբերի 7-ին Երեւանում կայացել է ՀՀ ԱԺ - ԼՂՀ ԱԺ համագործակցության միջխորհրդարանական հանձնաժողովի 10-րդ նիստը: Հոբելյանական նիստին մասնակցել են ՀՀ ԱԺ եւ ԼՂՀ ԱԺ պատգամավորներ:

ՀՀ ԱԺ նախագահ Գալուստ Սահակյանը, կարեւորելով ՀՀ-ԼՂՀ միջխորհրդարանական հանձնաժողովի գործունեությունը, նշել է, որ այն նոր որակ է հաղորդել Հայաստան-Արցախ միջպետական հարաբերություններին: Ըստ ՀՀ ԱԺ նախագահի՝ միասնական կամքը եւ ընդունված ու ընդունվելիք որոշումների հետեւողական իրականացումը Հայաստան-Արցախ փոխգործակցության հետագա զարգացման ամուր հիմք են: Գալուստ Սահակյանի խոսքով՝ ղարաբաղյան հակամարտության խաղաղ կարգավորման հիմնախնդիրը մշտապես ՀՀ խորհրդարանի ուշադրության կենտրոնում է, եւ այդ ուղղությամբ ձեռք բերված յուրաքանչյուր պայմանավորվածություն պետք է արժանանա ԼՂՀ բնակիչների հավանությանը:

Ձեւավորված ավանդույթի համաձայն՝ միջխորհրդարանական համագործակցության հանձնաժողովին ընդունել է ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը:

Ողջունելով հյուրերին՝ Հանրապետության նախագահը գոհունակությամբ է ընդգծել, որ վերջին տարիներին շատ սերտ համագործակցություն է ձեւավորվել Հայաստանի եւ Լեռնային Ղարաբաղի պետական մարմինների միջեւ, ու այդ առումով հատկապես ընդգծել է միջխորհրդարանական հարաբերությունները: Սերժ Սարգսյանը նշել է, որ խորհրդարանականների հետ նախորդ հանդիպումից հետո բավականաչափ ժամանակ է անցել, եւ այդ ընթացքում բազմաթիվ իրադարձություններ են տեղի ունեցել ինչպես Հայաստանում, այնպես էլ Արցախում եւ նրա շուրջ, ու պատրաստակամություն է հայտնել քննարկելու բոլոր այն հարցերը, որոնք հետաքրքրում են կամ կարող են հետաքրքրել Լեռնային Ղարաբաղի հասարակությանն ու իշխանություններին:

ԼՂՀ ԱԺ «Դաշնակցություն» խմբակցության ղեկավար, ԱԺ գիտության, կրթության, մշակույթի, երիտասարդության եւ սպորտի մշտական հարցերի հանձնաժողովի նախագահ Արմեն Սարգսյանի հավաստմամբ՝ միջխորհրդարանական 10-րդ նիստը նախորդ նիստերից առանձնացել է նրանով, որ երկու խորհրդարանների միջեւ ընտրվել է համագործակցության ավելի արդյունավետ համակարգ եւ առաջնահերթություն է տրվել հանձնաժողովների միասնական աշխատանքներին:

«Միջխորհրդարանական նիստի կարեւորագույն հարցը կապված է եղել Արցախի արտաքին քաղաքականության հետ,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց Ա. Սարգսյանը: - Համատեղ նիստի ժամանակ փորձում էինք գտնել այն ուղիները, թե ինչպես Հայաստանյան պատվիրակությունների մակարդակով միջազգային ատյաններում շոշափվի ԼՂՀ ճանաչման հարցը: Վերջին շրջանում շատ է աշխուժացել խորհրդարանական դիվանագիտությունը: Աշխարհի տարբեր երկրներից բազմաթիվ պատգամավորներ գալիս են ԼՂՀ Ազգային Ժողով, ինչպես նաեւ ԼՂՀ խորհրդարանից մի շարք պատվիրակություններ մեկնում են տարբեր երկրներ, եւ կարծես նոր որակ է ստանում Ղարաբաղի ճանաչման գործընթացը: Ժամանակն է, որ Հայաստանի եւ Ղարաբաղի խորհրդարանների միջեւ համագործակցությունն առավել ճկուն լինի: Այս առումով եւս հետաքրքիր քննարկումներ են եղել: Ես գոհ եմ այս հանդիպումից, քանզի քննարկվեցին ավելի պրակտիկ հարցեր»:

Անի ԱՇԱՏՅԱՆ

Ինքնորոշման շարժումներ. Կատալոնիա

Նոյեմբերի 9-ին Կատալոնիայիում անց է կացվել ոչ պաշտոնական հարցում-հանրաքվե, որին մասնակցել են մոտ 3 միլիոն քաղաքացիներ: 80%-ից ավելին քվեարկել են անկախության օգտին: Սակայն իսպանական իշխանությունները չընդունեցին հանրաքվեի արդյունքները՝ համարելով այն ոչ հիմնավորված: Սեպտեմբերին Իսպանիայի Սահմանադրական դատարանը, քննելով երկրի վարչապետ Մարիանո Ռահոյի դիմումը, կասեցրել էր Կատալոնիայում անկախության հանրաքվե անցկացնելու մասին Կատալոնիայի վարչապետ Արթուր Մասի որոշումը՝ այն համարելով ապօրինի: Չնայած Իսպանիայի Սահմանադրական դատարանի որոշմանը՝ Կատալոնիայի առաջնորդները որոշել էին ոչ պաշտոնական հանրաքվե անցկացնել:

Պատմական Կատալոնիայի շրջանն ընդգրկում է ներկայիս Իսպանիայի կազմում գտնվող Կատալոնիայի ինքնավար շրջանը եւ Ֆրանսիայի կազմում գտնվող Արեւմտյան Պիրենիներ դեպարտամենտը, այսպես ասած՝ Հյուսիսային Կատալոնիան: Կատալոնացիները նաեւ իրենց պատմական տարածքներ են համարում, այսպես ասած, «կատալոնական հողերը», որը վերաբերում է այն տարածքներին, որտեղ բնակչության թեկուզ մի մասը խոսում է կատալոներեն /Վալենսիա, Բալերյան կղզիներ եւ այլն/:

Կատալոնացիները միշտ ունեցել են ուժեղ ազգային մտածելակերպ եւ ձգտել են վերականգնել իրենց անկախությունը: Պատմական տարբեր շրջաններում կատալոնացիները փորձել են վերականգնել իրենց պետականությունը: Այդ ամենի արդյունքում՝ հասել են ինքնավարության, կատալոներենի պետական կարգավիճակի եւ կատալոնացիներին իսպանացիներից առանձին ազգ ճանաչելուն:

Պատմական ակնարկ

Կատալոնացիների պատմագրությունն ունի իր առանձնահատկությունները: Կատալոնացիները Կատալոնիայի կազմավորման տարեթիվ են համարում 988թ., երբ Բարսելոնայի կոմս Բորրել 2-րդը մերժեց Ֆրանկյան թագավորի նկատմամբ ունեցած վասալային կարգավիճակը, եւ Բարսելոնայի կոմսությունը դարձավ անկախ:

«Կատալոնիա» բառն առաջին անգամ փաստաթղթային կիրառություն է ստացել 12-րդ դարում՝ Բարսելոնայի կոմս Ռամոն Բերեգների երդմնակալության ժամանակ, որտեղ նա Կատալոնիայի բնակչությանն անվանում էր կատալոնացիներ: 1125-ից հարեւան Արագոնի թագավորության արքայադստեր եւ Բարսելոնայի կոմսի ամուսնության արդյունքում՝ Բարսելոնայի կոմսությունը եւ Արագոնի թագավորությունը միավորվում են, թագավոր է դառնում ազգությամբ կատալոնացի, Բարսելոնայի կոմս Ռամոն Բեչենգեր 4-րդը: Սակայն եւ Արագոնը, եւ Կատալոնիան շարունակում են պահպանել իրենց ինքնավարությունը: Կատալոնիայում շարունակում էր գործել Կատալոնիայի խորհրդարանը՝ Եվրոպայի ամենառաջին խորհրդարաններից մեկը: 1516-ին, դինաստիական ամուսնության հետեւանքով, Կաստիլիայի եւ Արագոնի թագավորությունները, այդ թվում՝ Կատալոնիան միավորվում են, ստեղծվում է Իսպանիա թագավորությունը՝ ներքին ամենալայն ինքնուրույնության պահպանմամբ: 18-րդ դարում Կատալոնիան բաժանվում է երկու մասի՝ հյուսիսային եւ հարավային: Հյուսիսային փոքր մասը՝ Ռուսալիոն քաղաքի հետ միասին, ընդգրկվում է Ֆրանսիայի կազմում, իսկ հարավային մեծ մասը, այդ թվում նաեւ՝ Բարսելոնան եւ Ժերոնան, մնում են Իսպանիայի կազմում:

Կատալոնիայում տեղի ունեցած պատմական գործընթացները շատ հետաքրքրական են: Ի տարբերություն Շոտլանդիայի, որը միավորվել է Անգլիայի հետ եւ տիրացել Անգլիայի թագին՝ Կատալոնիայում միավորման գործընթացը, կարելի է ասել, չի ստացվել, քանի որ, ինչպես Շոտլանդիայում, Կատալոնիայում նույնպես պատմական գործընթացը սկզբից ընթացել է միավորման հունով՝ միավորվելով Արագոնի թագավորության հետ եւ տիրանալով Արագոնի թագավորության գահին: Հետագա պատմական գործընթացները չար կատակ խաղացին կատալոնացիների գլխին. տեղի ունեցավ եւս մեկ միավորում՝ Արագոնի եւ Կաստիլիայի թագավորությունների, որի արդյունքում՝ ստեղծվեց Իսպանիայի թագավորությունը, ինչը վատ անդրադարձավ կատալոնացիների վրա, քանի որ, չնայած ներքին ինքնավարության պահպանման, իսպանական միապետերը ձգտում էին ձուլել կատալոնացիներին եւ ճնշել նրանց ազգային ինքնագիտակցությունը: Այս ամենի արդյունքում՝ կատալոնացիների եւ իսպանացիների միջեւ առաջացավ անվստահության մթնոլորտ, կատալոնացիների մոտ սկսվեց ազատության եւ ինքնորոշման պայքար: Պատմական տարբեր ժամանակաշրջաններում կատալոնացիները, օգտագործելով ստեղծված հարմար առիթները, բարձրացնում էին ազատ պետություն ստեղծելու հարցը, ինչը, սակայն, պատմական եւ քաղաքական գործընթացների պատճառով իր ավարտին չի հասնում:

Ինքնորոշման շարժումներ

Կատալոնացիներն այդպես էլ չհարմարվեցին Իսպանիայի կազմում եւ բազմիցս ապստամբեցին իսպանական միապետների դեմ: Ամենածավալուն ապստամբություններից կարելի է հիշել Հնձվորների պատերազմը (1640-1652թթ.), երբ Իսպանիայի թագավոր Ֆիլիպ 2-րդը ցանկացավ տիրանալ Կատալոնիայի հարստություններին, ինչը վերածվեց համաժողովրդական ապստամբության, իսկ հետագայում՝ անկախության համար պատերազմի: 18-րդ դարում Կատալոնիայում եւ նախկին Արագոնի թագավորության ամբողջ տարածքում վերացվում է ինքնավարությունը եւ բոլոր տեսակի արտոնությունները: Կատալոնացիները նաեւ ակտիվ պայքար էին մղում նապոլեոնյան նվաճողների դեմ: 19-րդ դարում Կատալոնիայում ակտիվանում են ազգային շարժումները եւ տեղի է ունենում ազգային վերածննդի զարթոնք: Այն իր գագաթնակետին է հասնում 1871թ., երբ Կատալոնիան փորձում է անկախանալ Իսպանիայից: 1930-ականներին կատալոնացիները կրկին անկախանալու փորձ են անում, սակայն սկսված քաղաքացիական պատերազմը ստիպում է կատալոնացիներին հետաձգել այն: 20-րդ դարում՝ Ֆրանկոյի դիկտատուրայի ժամանակ, Կատալոնիայում սկսվում են քաղաքական ճնշումները, փակվում է կատալոնալեզու մամուլը, քաղաքական հետապնդումների են ենթարկվում կատալոնացի քաղաքական գործիչները: Ֆրանկոի տապալումից հետո Կատալոնիայում կրկին սկսվում են ազգային շարժումներ, որի արդյունքում՝ 1979թ. Կատալոնիան ստանում է ինքնավար կարգավիճակ, իսկ կատալոներենը՝ պաշտոնական ստատուս: Կատալոնիան ունենում է սեփական կառավարությունը եւ խորհրդարանը:

Ինչպես տեսնում են, կատալոնացիների մոտ միշտ ամուր է մնացել ազգային պետականության վերականգնման գաղափարը, եւ կատալոնացիներ՝ ունեցել են ազգային պետականության հաստատուն մտածելակերպ՝ երբեք չհաշտվելով վասալային իրավիճակի հետ՝ հիմնականում պահպանելով կենտրոնական իշխանությունից իր ներքին ինքնուրույնությունը: Իսպանիայի ձեւավորումից ի վեր կատալոնացիները երբեք չեն հրաժարվել ազգային ինքնուրույնության եւ անկախ պետության վերականգնման գաղափարից: Իսպանական միապետների կողմից կատալոնացիների ինքնուրույնության վերացման կամ կատալոնացիների ներքին գործերին խառնվելու ցանկացած փորձ վերածվել է ազգային ապստամբության, եւ ինչպես արդեն նշվել է, կատալոնացիները, պատմական տարբեր ժամանակաշրջաններում օգտագործելով հարմար առիթը, փորձել են վերականգնել իրենց անկախությունը:

Հետաքրքիր համեմատական կարելի է անցկացնել Արցախի եւ Կատալոնիայի միջեւ, քանի որ Արցախում, չնայած օտարների տիրապետության տակ գտնվելու հանգամանքին, շարունակում էր միշտ ամուր մնալ ազգային պետականության վերականգնման գաղափարը: Ինչպես Կատալոնիան, այնպես էլ Արցախը, հակառակ արտաքին անկախության կորստին, երկար ժամանակ շարունակում էր ներքին ինքնավարություն ունենալ (Արցախյան մելիքություններ): Կարող ենք նաեւ ավելի գլոբալ զուգահեռներ անցկացնել. կատալոնացիների եւ հայերի համար պատմական գործընթացներն այնպես դասավորվեցին, որ այդ ժողովուրդները պատմական երկար ժամանակաշրջանում բաժանվեցին երկու հատվածի, ինչն իր բացասական ազդեցությունն ունեցավ այդ ժողովուրդների հետագա զարգացման վրա՝ դժվարություններ ստեղծելով ազգային անկախության վերականգնման համար: Անկախության շարժումները կտրուկ թափ ստացան 21-րդ դարում, որին կանդրադառնանք ստորեւ:

Իսպանական իշխանությունների հակակատալոնական քաղաքականությունը

Դարեր շարունակ իսպանական իշխանությունները տարբեր միջոցներ են ձեռնարկել՝ ազդելու կատալոնացիների ազգային ինքնագիտակցությանը՝ փորձելով ձուլման ենթարկել, ճնշել, ներշնչել կատալոնացիներին, որ նրանք չեն կարող լինել ինքնուրույն ազգ: Իսպանական կենտրոնական իշխանությունները դարեր շարունակ չէին ընդունում կատալոնացիներին՝ որպես ինքնուրույն ազգ, իսկ կատալոներենը համարում էին իսպաներենի բարբառ: Կատալոնացիների նկատմամբ բռնաճնշումները հատկապես աճել են 19-րդ դարի վերջին եւ 20-րդ դարում, երբ կատալոնացիների մոտ ավելի ուժեղացավ ազգային ինքնագիտակցությունը եւ անկախ երկիր ունենալու ձգտումները: Իսպանական իշխանություններն ամեն ինչ անում էին, որպեսզի չկորցնեն տնտեսապես զարգացած ու հարուստ այդ տարածաշրջանը:

Կատալոնացիների հանդեպ բռնաճնշումները կտրուկ աճել են Ֆրանկոյի դիկտատուրայի ժամանակ, երբ կատալոներենի պաշտոնական օգտագործումն արգելվեց եւ նույնիսկ քրեական պատիժ էր նախատեսվում նրա օգտագործման համար: Փակվեցին կատալոնալեզու թերթերը, բռնաճնշումներ սկսվեցին ազգային գործիչների նկատմամբ եւ այլն:

20-րդ դարում Կատալոնիայում տեղի ունեցած գործընթացներից մեզ համար հատկապես հետաքրքրական են որոշ իրադարձություններ, ինչը նաեւ մեզ՝ արցախի հայությանն է լավ ծանոթ, այսինքն՝ ժողովրդագրական պատկերի փոփոխություն: 20-րդ դարի կեսերից սկսած՝ Կատալոնիայում վերաբնակեցվեցին Իսպանիայի տարբեր շրջաններից բերված տասնյակ հազարավոր մարդիկ, ինչը զգալիորեն փոխեց տարածաշրջանի ազգագրական պատկերը, չնայած ներկայումս էլ, թեկուզեւ չնչին, բայց գերակշռում են կատալոնացիները: **Այս երեւույթը մեզ քաջ ծանոթ է, քանի որ Խորհրդային Ադրբեջանը պատմական հայկական տարածքներում, այդ թվում՝ Արցախում եւ Նախիջեւանում իրականացնում էր միեւնույն քաղաքականությունը, ինչը զգալիորեն փոխեց պատմական հայկական տարածքների՝ մասնավորապես Նախիջեւանի ազգագրական պատկերը:**

Շատ հետաքրքրական է նաեւ իսպանական իշխանությունների կողմից կատալոնական ազգի մասնատմանն ուղղված քաղաքականությունը: Եթե բուն Կատալոնիայի տարածքում իսպանացիներին չհաջողվեց ազդել կատալոնացիների ազգային ինքնագիտակցությանը եւ ձուլման ենթարկել, ապա «կատալոնական հողերի» մյուս տարածքներում՝ Վալեսիայում, Բալերյան կղզիներում իսպանական իշխանությունների հակակատալոնական քաղաքականությունը տվեց իր պտուղները: Վալենսիայում եւ Բալերյան կղզիներում բնակվող կատալոնացիներին հաջողվեց ներարկել, որ նրանք ոչ թե կատալոնացիներ են, այլ վալենսիացիներ եւ բալերացիներ, նույնիսկ հնարվեց նոր լեզուներ՝ վալենսերեն, մայորկերեն: Արդյունքում՝ Վալենսիայում բնակվող բազմաթիվ կատալոնացիներ, թեեւ իրենք կատալոնացիներ են, բայց իրենց համարում են վալեսիացիներ, իսկ կատալոներեն խոսող բազմաթիվ մարդիկ նույնիսկ չգիտեն, որ իրենք կատալոներեն են խոսում: Ազգային մասնատման քաղաքականությունը մեզ նույնպես լավ ծանոթ է, որովհետեւ Արցախն ու հայաբնակ մյուս տարածքներն էլ այդպես մասնատվեց Հայաստանից: Արցախը Հայաստանից բաժանման դրդապատճառներից մեկը հենց նույնն էր, ինչը տեղի է ունեցել կատալոնացիների հետ, այսինքն՝ ազգային ինքնագիտակցության ոչնչացում եւ ձուլում:

Կատալոնական ինքնորոշման շարժումը 21-րդ դարում

Ինչպես արդեն նշվեց, ինքնորոշման համար շարժումները Կատալոնիայում կտրուկ թափ ստացան 21-րդ դարում: Դեռեւս 1979-ին, Ֆրանկոյի ռեժիմի անկումից հետո Կատալոնիան ստացավ ինքնավարություն, ինչպես նաեւ կատալոներենը ստացավ պաշտոնական կարգավիճակ: Սակայն ինքնորոշման համար շարժումները իրենց գագաթնակետին հասան 21-րդ դարում: Ազգայնական տրամադրությունների աճխուժացումը եւ ինքնորոշման շարժման նոր թափը ստիպեցին իսպանական կենտրոնական իշխանություններին՝ տեղի տալ: 2006թ. Կատալոնիան ստացավ նոր ինքնավար կարգավիճակ՝ ֆինանսական ինքնուրույնության ընդլայնմամբ: Սակայն դա կատալոնացիները բավարար չգտան, եւ ինքնորոշման համար սկսված շարժումը չկոտրվեց: 2009-2010թթ. տեղի ունեցավ Կատալոնիայի անկախության համար ոչ պաշտոնական հարցում-հանրաքվե, որտեղ հարցվածների 90%-ը արտահայտվեց անկախության օգտին: 2012թ. ամբողջ Կատալոնիայով մեկ, «Կատալոնիա-Եվրոպայի նոր պետություն» կարգախոսով անցկացվեց մասսայական ցույց, որին մասնակցեց մեկ միլիոնից ավելի մարդ: 2012թ. նոյեմբերի 25-ին անցկացված ընտրությունների արդյունքով՝ Կատալոնիայի խորհրդարանում պատգամավորների մեծ մասն ընտրվեց, այսպես ասած, անկախության կողմնակից կուսակցություններից: Եվ այդ խորհրդարանը 2013-ի հունվարի 23-ին հռչակեց «Ինքնորոշման մասին հռչակագիրը», իսկ 2014թ. նոյեմբերի 9-ին նշանակվեց անկախության համար հանրաքվե: Այնուհետեւ, իսպանական կենտրոնական իշխանությունների հակազդեցության ու իրականացված կոշտ քայլերի արդյունքում, անկախության հանրաքվեն վերանվանվեց քաղաքացիների ոչ պաշտոնական հարցման:

Իրավական տեսանկյուն

Կատալոնացիների դեպքում կարելի է հստակորեն ասել, որ ոտնահարվել են նրանց ազգային իրավունքները բոլոր տեսանկյուններից, նամանավանդ՝ 20-րդ դարում: Ֆրանկոյի դիկտատուրայի ժամանակ այդ ամենը վերածվեց քաղաքական ճնշումների ու հալածանքների, ընդհուպ՝ մինչեւ ազգային լեզվի ու ազգ կոչվելու իրավունքի արգելում:

Իրավական տեսանկյունից՝ Կատալոնիայում տեղի ունեցող գործընթացները շատ նման են 1980-ականների վերջին Արցախում տեղի ունեցած գործընթացներին, նամանավանդ՝ հանրաքվեի արգելումը երկրի կենտրոնական իշխանությունների կողմից: Նման իրավիճակ էր ստեղծվել նաեւ Արցախում 1988-ին, երբ արցախահայության օրինական պահանջը մերժվեց խորհրդային իշխանությունների կողմից:

Ներկայումս ազգային իրավունքների համար պայքարը Կատալոնիայում գտնվում է գագաթնակետին, ու համոզված եմ, որ դեռեւս կտեսնենք ազգային իրավունքների եւ անկախ պետություն ստեղծելու համար իրավական պայքար: Սակայն, համոզված եմ, որ այդ պայքարը կընթանա քաղաքակիրթ հունով, առանց որեւէ լուրջ բախումների, քանի որ Եվրոպայում արդեն հասկացել են, որ ցանկացած պետություն պետք է հարգի իր քաղաքացիների իրավունքները, այդ թվում՝ ինքնորոշման եւ ազատ կամարտահայտության իրավունքը, որը համարվում է ժողովրդավարության եւ մարդու իրավունքների պաշտպանության հիմնաքարը:

Աշխարհն արդեն սկսում է հասկանալ, որ ցանկացած իրավիճակում, միջազգային իրավահարաբերություններում կարեւորագույն սկզբունքն ազգերի ինքնորոշման իրավունքն է, քանի որ այն սերտորեն կապված է մարդու իրավունքների եւ դրանց պաշտպանության հետ: Ի դեպ, նման այդպիսի հիմնավորում է տալիս «Մարդու իրավունքների հռչակագիրը»: Ոչ մի դեպքում չի կարելի անտեսել ժողովրդի ազատ արտահայտվելու, իր ապագան ազատ տնօրինելու իրավունքը:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախը մասնակցում է «World Travel Market» զբոսաշրջային ցուցահանդեսին

Նոյեմբերի 3-6-ը Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամը հայկական հինգ զբոսաշրջային ընկերությունների հետ համատեղ մասնակցել է Լոնդոնում անցկացվող World Travel Market 2014 զբոսաշրջային միջազգային ցուցահանդեսին:

Միեւնույն տաղավարի ներքո ներկայացվել է նաեւ Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունը:

Ցուցահանդեսին մասնակցել է 186 երկրի շուրջ 5000 զբոսաշրջային ընկերություն եւ զբոսաշրջային ոլորտի ավելի քան 50 000 մասնագետ:

Ցուցահանդեսի ընթացքում միջազգային հանրությանը ներկայացվել է Հայաստանի եւ Արցախի պատմամշակութային եւ քրիստոնեական ժառանգությունը ցուցադրող գովազդային նյութեր եւ քարտեզներ անգլերենով:

ԼՂՀ պատվիրակությունը միջազգային ցուցահանդեսի շրջանակում կազմակերպել է նաեւ գինու համտես եւ ավանդական հյուրասիրություն:

ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանի հավաստմամբ՝ Ադրբեջանի կողմից ձեւավորված տխուր ավանդության համաձայն՝ Ադրբեջանը երկու անգամ փորձել է խափանել ցուցահանդեսում ԼՂՀ պատվիրակության մասնակցությունը՝ նոյեմբերի 4-ին կազմակերպելով ցույց Արցախյան տաղավարի դիմաց, որը, ինչպես միշտ, տապալվել է: Ադրբեջանցիների հեթանոսական սադրանքը եղել է ցուցահանդեսի վերջին օրը, երբ հերթական հակաղարաբաղյան սադրանքն է կազմակերպվել Արցախի տաղավարի մոտ: «Հատկանշական է, որ «ցուցարարների» մեջ եղել են նաեւ Մեծ Բրիտանիայում Ադրբեջանի դեսպանատան աշխատակիցներ»,- նոյեմբերի 12-ին հրավիրած մամուլի ասուլիսի ժամանակ նշեց Ս. Շահվերդյանը եւ հավելեց, որ ԼՂՀ եւ ՀՀ պատվիրակությունների ջանքերի շնորհիվ հնարավոր է դարձել կասեցնել սադրանքը: Կարճ ժամանակ հետո անվտանգության աշխատակիցները դուրս են բերել ադրբեջանցի կարգազանց երիտասարդներին:

ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչության պետ Սերգեյ Շահվերդյանը, ով ղեկավարում էր Արցախի պատվիրակությունը Լոնդոնի ցուցահանդեսում, ասուլիսի ժամանակ մեկնաբանելով Ադրբեջանի այդօրինակ ակտիվությունը, նշել է. «Վերջին շրջանում միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսներում ադրբեջանցիների նման սանձազերծ պահվածքը պայմանավորված է գլխավորապես ՄԱԿ-ի Զբոսաշրջության համաշխարհային կազմակերպությունում Ադրբեջանի կողմից նախաձեռնված հակահայկական բանաձեւի ձախողմամբ: Խոսքը վերաբերում է ս.թ. հոկտեմբերին Սամարղանդում կայացած՝ նշյալ կառույցի գործադիր խորհրդի նիստում Ադրբեջանի կողմից նախաձեռնված «Օկուպացված տարածքներում զբոսաշրջության քարոզչությունը կանխելու մասին» բանաձեւին: Նիստի ընթացքում Ադրբեջանի կողմից առաջարկված վերոհիշյալ բանաձեւը չի ընդունվել ոչ մի երկրի կողմից: Իսկ ադրբեջանական ցույցերը նպատակ են հետապնդում ֆիզիկապես անհնար դարձնել ԼՂՀ մասնակցությունը միջազգային խոշոր ցուցահանդեսներին, սակայն՝ ապարդյուն»:

«World Travel Market» միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսը համարվում է խոշորագույն տուրիստական իրադարձություն, որի ժամանակ հազարավոր ընկերություններ եւ աշխարհի գրեթե բոլոր երկրները ներկայացնում են զբոսաշրջության ոլորտում իրենց ներուժն ու ձեռք բերած հաջողությունները:

Լոնդոնյան ցուցահանդեսն այս տարվա 4-րդ միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսն էր, որին մասնակել է ԼՂՀ կառավարությանն առընթեր զբոսաշրջության եւ պատմական միջավայրի պահպանության վարչությունը: Ս. Շահվերդյանի հավաստմամբ՝ եկող տարի ԼՂՀ-ն կմասնակցի 3 միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսների:

Հիշեցնենք, որ հոկտեմբերի 9-11-ը Հայաստանը Լեռնային Ղարաբաղի հետ համատեղ Իտալիայի Ռիմինի քաղաքում մասնակցել է TTG Incountri միջազգային զբոսաշրջային ցուցահանդեսին, որտեղ Արցախը ներկայացել է առանձին տաղավարով:

Ա. ԱՂԱՏՅԱՆ

Փոխվարչապետը կարեւորում է համայնքապետերի համար կազմակերպվող դասընթացները

Նոյեմբերի 3-ին ԼՂՀ փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը հանդիպել է համայնքների ղեկավարների համար կազմակերպվող շարունակական դասընթացների՝ այս տարվա վերջին խմբի մասնակիցների հետ:

Հանդիպման ժամանակ փոխվարչապետը կարեւորել է կառավարության նախաձեռնությամբ անցած տարի մեկնարկած ծրագիրը՝ համայնքների ղեկավարների գիտելիքների ամրապնդման, օրենսդրական դաշտի փոփոխություններին ու լրացումներին ծանոթանալու, համայնքային նշանակության խնդիրներն ի մի բերելու եւ ընդհանուր լուծումներ գտնելու տեսանկյուններից: Ա. Աղաբեկյանի համոզմամբ՝ ստանալիք գիտելիքներն իրենց ազդեցությունն են թողնելու համայնքների

սոցիալ-տնտեսական զարգացման եւ կառավարման արդյունավետության բարձրացման գործում:

Փոխվարչապետ Արթուր Աղաբեկյանը համայնքապետերին խորհուրդ է տվել դասընթացների ժամանակ լինել ակտիվ եւ ստանալ իրենց հուզող խնդիրների պարզաբանումները՝ հատկապես բյուջեի ձեւավորման գործում իրենց դերակատարությունը բարձրացնելու հարցում: Փոխվարչապետը հորդորել է համայնքային ավագանիների հետ քննարկել բյուջեի կազմման հարցերը, ուշադիր լինել տեղական տուրքերի գանձման ուղղությամբ, որպեսզի սեփական բյուջեի մուտքերն ավելանան եւ հնարավոր լինի համայնքային հարցերը լուծել առանց պետական դոտացիաների:

Ա. Աղաբեկյանը, ներկաներին տեղեկացնելով մի շարք համայնքներում սանմաքրման ուղղությամբ իրականացվող փորձնական ծրագրերի մասին, հորդորել է կարգավորել իրենց բնակավայրերի սանիտարական դրությունը՝ հատուկ աղբատեղեր ունենալ եւ հետեւել աղբահանության ընթացքին:

Անի ԱՂԱՏՅԱՆ

Արցախում հունվարի 1-ից կբարձրացվի պետական նպաստի չափը

Հունվարի 1-ից կբարձրացվեն Արցախի պաշտպանության ժամանակ մարտական գործողություններին մասնակցելու հետեւանքով եւ ծառայողական պարտականությունների կատարման ժամանակ զոհված զինծառայողների, ինչպես նաեւ առանց ծնողական խնամքի մնացած երեխաներին տրվող պետական նպաստի չափերը:

Նոյեմբերի 7-ին կայացած կառավարության նիստի ժամանակ՝ գործադիրի որոշմամբ այդ նպատակով տրամադրվող գումարը գալիք տարվանից կավելանա շուրջ 43 մլն դրամով: Հունվարի 1-ից այդ խմբերում ընդգրկված քաղաքացիները նախկին 16 հազարի փոխարեն կստանան մոտ 42 հազար դրամ:

Գործադիրը հաստատեց «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ի՝ Կաշենի պղնձամոլիբդենային հանքավայրի շահագործման ներդրումային ծրագիրը:

Ծրագրի համաձայն՝ «Բեյզ Մեթըլս» ՓԲԸ-ն Կաշենի բաց հանքի հարակից տարածքում հանքաքարի վերամշակման համար նախատեսում է կառուցել նոր հարստացուցիչ ֆաբրիկա: Տարեկան արտադրողականությունը սկզբնական շրջանում կկազմի 1.8 միլիոն տոննա, իսկ սկսած 2022 թվականից՝ 3.5 միլիոն տոննա:

Կաշենում լեռնահանքային կոմբինատի շինարարության եւ գործարկման համար նախատեսվում է 128 մլն ԱՄՆ դոլարի ներդրում կատարել: Հաստատված պաշարները վերամշակելու համար պլանավորվող ժամանակահատվածը կազմում է 20 տարի:

Գործադիրի ղեկավարի հավաստմամբ՝ ծրագրի իրականացումը զգալի նշանակություն կունենա ԼՂՀ պետական բյուջեում հարկային եկամուտների մասով: «Կաշենի հանքի շահագործումն Արցախի տնտեսության խոշորագույն ծրագիրն է՝ շուրջ 127 մլն դոլար ներդրումային կապիտալով: Այդ ծրագրում կառավարության դերակատարումը մասնավորապես եղել է Սոթք-Քարվաճառ-Հաթերք բարձրավոլտ, օդակաձեւ էլեկտրացանցի կառուցումը, որի շնորհիվ բավարարվել է ոչ միայն ընկերության էլեկտրաէներգիայի պահանջարկը, այլեւ բարձրացվել է հանրապետության էներգետիկ անվտանգության մակարդակը»,- նշել է Արայիկ Հարությունյանը:

Սեփ.ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

«Մաքսակետի մասին մի մտածեք: Արցախի ողջ արտադրանքը Հայաստանով պետք է արտահանվի». Սերգո Կարապետյան

Նոյեմբերի 7-ին Ստեփանակերտում կայացավ ՀՀ եւ ԼՂՀ գյուղատնտեսության նախարարների համատեղ ասուլիսը: Ասուլիսի ժամանակ ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանը, անդրադառնալով Մաքսային միությանը Հայաստանի անդամակցությանը, նաեւ՝ ԼՂՀ եւ ՀՀ սահմանային գոտում մաքսակետի առկայությանը, նշեց, որ պետք է շարունակեն աշխատել, խնդիրներ կարգավորել, իսկ մաքսակետի առկայության մասին խորհուրդ տվեց դեռեւս չխոսել:

«Արցախի ամբողջ արտադրանքը Հայաստանով պետք է արտահանվի: Դրա համար ստեղծելու ենք համապատասխան պայմաններ, որպեսզի հետագայում խնդիրներ չառաջանան»,- նշեց Սերգո Կարապետյանը:

ՀՀ գյուղատնտեսության նախարար Սերգո Կարապետյանի ղեկավարած պատվիրակությունը

հանդիպում է ունեցել նաեւ Արցախի Հանրապետության վարչապետ Արայիկ Հարությունյանի հետ:

Ինչպես հայտնում է ԼՂՀ կառավարության աշխատակազմի տեղեկատվության եւ հասարակայնության հետ կապերի բաժինը՝ կողմերը քննարկել են հետագա համագործակցության հնարավորություններն անասնապահության, գյուղտեխնիկայի սպասարկման եւ մի շարք այլ ոլորտներում:

Նրանք մտքեր են փոխանակել երկու հանրապետությունների սննդի անվտանգության բնագավառում առկա հիմնախնդիրների շուրջ: Պայմանավորվածություններ են ձեռք բերվել հատկապես մսամթերքի անվտանգության մակարդակի բարձրացման ուղղությամբ իրագործվող համատեղ քայլերի շուրջ:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Արցախում է Հայ Օգնության Միության կենտրոնական վարչության գրասենյակի տնօրենը

ՀՕՄ-ը, որ աշխարհում հայտնի է իր բարեսիրական, մարդասիրական ծրագրերով, շարունակում է մշտական ուշադրության տակ պահել հայ կանանց, հայ մանուկներին եւ, ընդհանրապես, հայ մարդուն առնչվող մի շարք խնդիրներ: Այդ շրջանակում՝ ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության ներկայացուցիչները ժամանակ առ ժամանակ այցելություններ են կազմակերպում ՀՕՄ-ի միավորներ՝ տեղում ծանոթանալու առկա խնդիրներին ու աշխատանքներին:

Այդ նպատակն ուներ ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության գրասենյակի տնօրեն Լալա Դեմիրճյան-Աթթարյանի այցն Արցախ:

Այցի ընթացքում տնօրենը եւ ՀՕՄ-ի Կենտրոնական վարչության անդամ Ալեսյա Բեջանյանը հանդիպում են ունեցել Արցախի ՀՕՄ-ի Մեկուսի միավորի վարչության հետ: Հանդիպման ժամանակ քննարկվել են ընթացիկ եւ ապագա ծրագրեր, «Սոսե» մանկապարտեզների հետ կապված մի շարք հարցեր:

Տնօրենն այցելել է նաեւ Շուշիի եւ Ստեփանակերտի «Սոսե» մանկապարտեզներ, ծանոթացել մանկապարտեզների խնդիրներին ու դժվարություններին:

«ԱՊԱՌԱԺ»

ԼՂՀ ՈՒՀԱ-ն հրավիրվել է Սոչիի փառատոնին

ԼՂՀ Ուրախների եւ հնարամիտների ակումբը հրավիրվել է մասնակցելու Սոչիում կայանալիք՝ ՈՒՀԱ-ի 26-րդ միջազգային փառատոնին: Ուշագրավ է, որ հրավերում նշված է Արցախի Հանրապետություն եզրույթը:

ԼՂՀ ՈՒՀԱ-ի նախագահ Դավիթ Վանյանի խոսքերով՝ սա արդեն երկրորդ անգամն է, որ թիմը հրավեր է ստանում մասնակցելու ՈՒՀԱ-ի փառատոնին, սակայն ֆինանսական խնդիրների պատճառով չի կարողանում մասնակցել:

Դավիթ Վանյանը նշեց, որ արդեն դիմել են ԼՂՀ մշակույթի եւ երիտասարդության հարցերի նախարարությանը, բայց պատասխան դեռ չեն ստացել: Այս հարցում նրանք լավատես են, եւ հուսով են, որ շուտով դրական պատասխան կլինի:

Թիմում ընդգրկված են 23-30 տարեկան՝ տարբեր մասնագիտության երիտասարդներ: Ծրագիրը, որով պետք է ներկայանան փառատոնին, արդեն պատրաստ է:

«Առաջնային խնդիրն այն է, որ այնտեղ ներկայացնելու ենք Արցախի երիտասարդությանը: Հումորն ինքնարտահայտվելու միջոց է: Եթե բարձրանում ես բեմ, ուրեմն ասելիք ունես, իսկ հումորի միջոցով կարող ես շատ բան ասել»,- նշեց նա:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

Գորգագործությունը՝ որպես մշակույթի պահպանման ու զարգացման կարեւոր գործոն



Հասմիկ Մխիթարյանն աշխատում է «Ղարաբաղ կարպետ» ՍՊԸ-ում՝ որպես ընկերության արտադրության պետ: Հասմիկը ծնվել ու ապրել է Երեւանում, սակայն նրա արմատներն ավելի խորն են ձգվում: Նրա ծնողները ծնունդով մշեցի են եւ մեծ դեր են ունեցել ոչ միայն Հասմիկի դաստիարակման, այլեւ նրա մասնագիտության ընտրության գործում: Այսօր Հասմիկն Արցախում է՝ իր ջանքն ու եռանդը նվիրելով Արցախում գորգագործության զարգացման կարեւոր գործին:

- Տիկին Հասմիկ, ինչպե՞ս եւ ե՞րբ եղավ Ձեր մուտքը գորգագործություն: Քանի՞ տարի է, որ աշխատում եք այդ ասպարեզում:

- Գորգագործություն սովորել եմ տատիկիցս ու մայրիկիցս, ովքեր տնայնագործ գորգագործներ են եղել: Ծնողներս արմատներով Արեւմտյան Հայաստանի Մուշ քաղաքից են: Սերը գորգագործության հանդեպ, կարելի է ասել, ժառանգություն է տատիկիցս ու մայրիկիցս: Մանկուց նստում էի նրանց կողքին եւ հետեւում նրանց աշխատանքին: Եվ այդպես՝ գորգագործությունը դարձավ իմ կյանքից անբաժանելի: Արդեն հիսուն տարի է՝ աշխատում եմ այդ ասպարեզում: Երեւանում աշխատել եմ մի շարք հայտնի գորգագործական-կարպետագործական ընկերություններում՝ սկզբում՝ որպես կարպետագործ, ապա՝ արտադրության պետ:

2013 թվականին հրավիրվեցի Արցախ, տեղափոխվեցի ու սկսեցի աշխատել «Ղարաբաղ կարպետ» նորաբաց ընկերությունում՝ որպես արտադրության պետ: Այսօր ես իմ փորձը փոխանցում եմ տեղի գորգագործներին, վերահսկում նրանց աշխատանքը: Ինքս, սակայն, չեմ գործում: Ինձ համար շատ ուրախալի է, որ այսօր երիտասարդ շատ գորգագործներ են այստեղ աշխատում, եւ մեծ սիրով ու եռանդով են անում իրենց գործը:

- Ի՞նչ է Ձեզ համար գորգագործությունը՝ արվե՞ստ, ստեղծագործությո՞ւն, թե՞ աշխատանք:

- Գորգագործությունն արվեստ է, մշակույթ՝ համեմված ստեղծագործությամբ: Ես ձգտում եմ գորգագործներին փոխանցել այն գիտակցումը, որ սա սոսկ աշխատանք չէ, այլ կարեւոր մի գործ մշակույթի պահպանման ու զարգացման ասպարեզում, եւ որ նրանցից ամեն մեկը կարեւոր աշխատանք է անում այդ ոլորտում:

- Ապրելով ու աշխատելով Արցախում՝ կարող ենք վստահ ասել, որ դուք հայրենանվեր գործ եք կատարում՝ ներդրում ունենալով Արցախում գորգագործության զարգացման գործում: Ի՞նչը ձեզ դրդեց գալ Արցախ:

- Ինձ միշտ հետաքրքրել է արցախյան գորգագործությունը, հատկապես՝ հին արցախյան գորգերն ու նրանց նախշերը: Այսօր ես շատ ուրախ եմ, որ մաս եմ կազմում արցախյան գորգերի վերականգնման գործում: Արցախը մեր հայրենիքի մի մասնիկն է, որի բարգավաճման գործին յուրաքանչյուրս պիտի մասնակից լինենք:

Ես այստեղ երբեւէ ինձ օտար չեմ զգացել, ավելին՝ Արցախն իմ երկրորդ տունն է, իմ օջախը, իսկ իր սեփական տան մեջ մարդ երբեք իրեն օտար չի կարող զգալ:

- Որքանո՞վ է այսօր հաջողվում կազմակերպել հին արցախյան գորգերի վերարտադրումը, կարելի է ասել՝ վերածնունդը: Ի՞նչ խնդիրներ կան այս հարցի հետ կապված:

- Այսօր մենք լրջորեն հետաքրքրված ենք հին արցախյան գորգերի վերարտադրմամբ: Այդ ուղղությամբ մեր դիզայներները կատարում են լուրջ աշխատանքներ, ուսումնասիրում են թանգարաններում կամ առանձին մարդկանց մոտ պահպանված հին գորգերի նախշերը եւ փորձում դրանք նույն ձեւով վերարտադրել: Այս ծրագրով փորձում ենք աշխարհին ներկայացնել, որ սրանք հայկական, տիպիկ արցախյան գորգեր են, քանզի, ինչպես գիտեք, այսօր ադրբեջանական քարոզչական մեքենան փորձում է դրանք իրենց վերագրել, ժխտել հայկական ծագումը:

Յուրաքանչյուր աշխատանքում լինում են խնդիրներ, սակայն կազմակերպված, կոլեկտիվ աշխատանքի շնորհիվ կարողանում ենք դրանք հարթել ու զգալի արդյունքի հասնել: Յուրաքանչյուր աշխատանքում կարեւորը նպատակի գիտակցումն է:

Հարցազրույցը՝ Հերմինե ԱՎԱԳՅԱՆԻ

ԼՂՀ ՈՒԾՈՒ-ի հավաքականը մեդալներով է վերադարձել

Հոկտեմբերի 24-26-ը, Երեւանում կայացած ՀՀ Ուշու-ի գավաթի խաղարկության ժամանակ, Արցախի մարզիկները փայլուն մասնակցություն են ցուցաբերել՝ վերադառնալով 9 ոսկե, 5 արծաթե եւ 1 բրոնզե մեդալներով:

Խաղարկությանը մասնակցում էին ՀՀ տարբեր շրջաններից 120 մարզիկներ, այդ թվում՝ 15 հոգի Արցախից:

Ուշու-ի գավաթի խաղարկությանը մասնակցում էին 8-19 տարեկան տարիքային խմբի մարզիկներ՝ 7 տարբեր քաշային կարգերում:

Aparaj.am-ի հետ զրույցում ԼՂՀ Ուշուի ֆեդերացիայի գլխավոր մարզիչ, ինչպես նաեւ ԿՖՄԸ-ը ՄՊՄԴ սանդա ուշուի մարզիչ Դավիթ Գրիգորյանը նշեց, որ մարզիկներից շատերը առաջին անգամ են մասնակցում նման մրցույթի, եւ սա լավ փորձառություն է նրանց համա՝ ապագայում ավելի լուրջ առաջնությունների մասնակցելու համար:

Արմինե ՆԱՐԻՆՅԱՆ

«Կահիրեի միջազգային կինոփառատոնի» մեկնարկը տրվել է Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված ֆիլմով

Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակին նվիրված՝ «The cut» ֆիլմով նախօրեին Կահիրեում մեկնարկել է «Կահիրեի միջազգային կինոփառատոնը»: Ֆիլմի ռեժիսորն է Ֆեյվ Աքինը:

Կինոփառատոնը հայտնի է ամբողջ աշխարհում: Այն տեղի է ունենում ամեն տարի: Առաջին անգամ անցկացվել է 1976 թվականին, եւ առաջինն է եղել, որը նշվել է արաբական աշխարհում: Այս փառատոնը չի անցկացվել միայն 2011 եւ 2012 թվականներին՝ երկրում քաղաքական անկայունության պատճառով:

Ֆիլմը նկարահանված է Հայոց ցեղասպանության փաստերի հիման վրա: Ֆիլմի հերոսը Նազարեթ Մանուկյանն է, ով Օսմանյան կայսրության կողմից իրականացված հայերի կոտորածի պատճառով ենթարկվում է բազմաթիվ չարչարանքների եւ հեռացվում իր հարազատ գյուղից: Նա կորցնում է իր ընտանիքը, սակայն իմանում է, որ իր աղջիկները ողջ են եւ սկսում է աշխարհով մեկ փնտրել նրան:

Անի ԱՋԱՏՅԱՆ

Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծը կրկին Ֆրանսիայի խորհրդարանում է

Ֆրանսիայի խորհրդարանում կրկին կքննարկվի Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրինագիծ: Մարսել քաղաքից ընտրված պատգամավոր Վալերի Բուայեն «Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող» նոր օրինագիծ է ներկայացրել խորհրդարան:

Ըստ օրինագծի՝ նախատեսվում է 5 տարվա ազատազրկում եւ 45 հազար եվրո տուգանք պատժաչափ:

Բուայեն նոյեմբերի 4-ին, 23 պատգամավորի ստորագրությամբ, օրինագիծը հանձնել է Ֆրանսիայի Ազգային ժողովի ղեկավարությանը:

Ֆրանսիայի խորհրդարանի պատգամավոր Վալերի Բուայեն թուրքական «Ջիհան» գործակալության հետ հարցազրույցում հույս է հայտնել, որ օրինագիծը շուտով կհայտնվի խորհրդարանի օրակարգում եւ նշել է. «Միջին Արեւելքում տեղի ունեցող իրադարձությունները պարտավորեցնում են պատրաստել այս նախագիծը: Սիրիայում եւ Իրաքում ազգային փոքրամասնություններն ու քրիստոնյաները ցեղասպանության են ենթարկվում»:

Իր հարցազրույցում ֆրանսիացի պատգամավորը նաեւ շեշտել է, որ Ֆրանսիայի նախագահ Ֆրանսուա Օլանդն անցած տարվա ապրիլի 24-ին՝ Հայոց ցեղասպանության զոհերի հիշատակի օրը, խոստում է տվել եւ կկատարի այն:

Վալերի Բուայեն նաեւ հայտարարել է, որ նոր օրինագիծն ուղարկել է խորհրդարանում ներկայացված բոլոր կուսակցություններին եւ արդեն 40-ից ավելի պատգամավորներ, իրենց ստորագրությամբ, աջակցություն են հայտնել նոր օրենքի նախագծին:

Հիշեցնենք, որ Բուայեի պատրաստած՝ Հայոց ցեղասպանության ժխտումը քրեականացնող օրենքի նախորդ նախագիծն ընդունվել էր Ֆրանսիայի խորհրդարանի եւ Սենատի կողմից, սակայն երկրի Սահմանադրական խորհուրդն այն սահմանադրությանը հակասող էր ճանաչել:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Նավարայի խորհրդարանը հանդես է եկել Արցախին աջակցող հայտարարությամբ

Նոյեմբերի 3-ին Իսպանիայի ինքնավար համայնք (նահանգ) խորհրդարանի խոսնակների խորհուրդը հանդես է եկել պաշտոնական հայտարարությամբ: Հայտարարությամբ Նավարայի խորհրդարանը կոչ է անում միջազգային հանրությանը, հատկապես՝ ԵԱՀԿ Մինսկի խմբին եւ Եվրամիությանը՝ ձեռնարկել բոլոր անհրաժեշտ արդյունավետ քայլերը Լեռնային Ղարաբաղի հակամարտության խաղաղ եւ ժողովրդավարական ճանապարհով կարգավորման համար: Հայտարարության մասին ծանուցվելու է ԵԱՀԿ-ին, Եվրոպական Միությանը, Հայաստանի եւ Ադրբեջանի կառավարություններին եւ Լեռնային Ղարաբաղի նախագահին ու խորհրդարանին:

Հայտարարությունը հատկապես կարեւոր է այն առումով, որ այնտեղ նշված է, որ Արցախի խնդրի արդյունավետ կարգավորման համար Արցախի իշխանությունները բանակցությունների կողմ պետք է լինեն: Մասնավորապես հայտարարության տեքստում նշվում է. «Լեռնային Ղարաբաղի իշխանությունները պետք է պարտադիր կողմ հանդիսանան ցանկացած ձեւաչափի, որը կարող է վճռորոշ դերակատարություն ունենալ երկրի ապագայի համար», ինչպես նաեւ ողջունվում է Լեռնային Ղարաբաղի ժողովրդի նվիրվածությունը ժողովրդավարությանը:

Նավարայի խորհրդարանի Խոսնակների խորհուրդը խորհրդարանական մարմին է, որտեղ խորհրդարանական խմբակցությունները ներկայացված են իրենց խոսնակներով: Այն մասնակցում է խորհրդարանի կողմից քաղաքական բանաձեւերի մշակմանը եւ ընդունմանը, ինչպես նաեւ իրավասու է հանդես գալու պաշտոնական հայտարարություններով:

Նավարայի բնակչության մեծ մասը էթնիկ բասկեր են: Միջնադարում Նավարան եղել է անկախ բասկյան թագավորություն, որը ընդգրկել է մեծ տարածքներ ներկայիս Իսպանիայի հյուսիսում եւ Ֆրանսիայի հարավ-արեւմուտքում: Նավարան նաեւ անվանում էին Բասկոնիա: Հետագայում Նավարան բաժանվել է Իսպանիայի եւ Ֆրանսիայի միջեւ: Ներկայումս՝ ինչպես հարեւան Բասկերի Երկիրը, այնպես էլ Նավարան, ունի լայն ինքնավարություն Իսպանիայի կազմում:

Ի դեպ, Բասկերի Երկրի խորհրդարանը սեպտեմբերի 12-ին փաստաթուղթ է ընդունել, համաձայն որի՝՝ աջակցում է Լեռնային Ղարաբաղի ինքնորոշման իրավունքի իրագործմանը:

Վահե ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ

Արցախյան օրեր Լիբանանում

ՀՅ Դաշնակցության Լիբանանի «Սարդարապատ» կոմիտեի հրավերով՝ հոկտեմբերի 24-ից նոյեմբերի 1-ը այնտեղ էր գտնվում Արցախի «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պետական համույթը:

Արդեն 4-րդ տարին է, ինչ Բուրջ Համուտում կազմակերպվում է ամենամյա փառատոն, եւ ամեն տարի այն նոր խորագիր է կրում: Այս տարի փառատոնը նվիրված է եղել Արցախին եւ կրել է «Մենք ենք մեր Արցախը» խորագիրը:

Այս տարի Բուրջ Համուտի փառատոնին իրենց մասնակցությունն են ցուցաբերել Մարաշի, Ուրֆայի, Ամանոսի, Սասնո, Բալուի, Տիգրանակերտի, Կեսարիայի, Պերեճիկի եւ Խարբերդի հայրենակցական միությունները, «Արցախ ֆոնդ»-ը, ՀՅԴ «Ռոստոմ» պատանեկան միությունը, ՀՅԴ ԼԵՄ-ի «Արշավիր Շիրակյան» մասնաճյուղը, ՀՅԴ Զավարյան ուսանողական միությունը եւ այլն: «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պետական համույթը փառատոնի հատուկ հյուրն է եղել: Համույթը, ինչպես նաեւ հայկական համայնքի ստեղծագործական համույթները, փառատոնին հանդես են եկել համերգային ծրագրով:

Ինչպես նախորդ երեք տարիներին, այս տարի եւս յուրաքանչյուր հայրենակցական միության հատկացվել են տաղավարներ: Ամեն մի տաղավարում տվյալ շրջանին հատուկ ուտեստների հյուրասիրություն է կատարվել: Տաղավարներում ներկայացվել են նաեւ հայկական տարազներ, տարբեր իրեր եւ գրքեր:

Համույթը, փառատոնի շրջանակներից դուրս, նաեւ երեք համերգ է ունեցել Լիբանանում: Համույթի հետ Արցախից Լիբանան է մեկնել պատանի երգչուհի Էլեն Հովհաննիսյանը, ով յուրաքանչյուր համերգի ներկայացել է մի քանի երգով: Էլենը Բեյրութում ներկայացրել է «Արցախ» երգի պրեմիերան, որը հատուկ գրվել է նրա համար:

«Լիբանանում մենք ջերմ ընդունելության արժանացանք,- «Ապառաժ»-ի հետ զրույցում նշեց «Մենք ենք մեր սարերը» երգի-պարի պետական համույթի տնօրեն Սլավիկ Ապրեսյանը,- ուրախ եմ, որ Լիբանանում կարողացանք հավուր պատշաճի ներկայացնել Արցախը»,- ավելացրեց նա:

Համույթը լիբանանահայ հանդիսատեսին ներկայացրել է ազգային, հայրենասիրական, ժողովրդական եւ ազգագրական երգերի շարք՝ փոխանցելով Արցախի շունչն ու ոգին:

Ս. Ապրեսյանի խոսքերով՝ նրանք համերգներով հանդես են եկել տարբեր երկրներում, իսկ Լիբանանում առաջին անգամ են ելույթ ունենում:

«Մենք շատ պետություններում ենք հանդես եկել, բայց այն հայկական ոգին, որը կար Լիբանանում, չենք տեսել ոչ մի տեղ: Նրանց համար Արցախը մեծ արժեք ունի: Ակնհայտ է, որ Արցախի ազատագրումը լիբանանահայության բաղձալի երազանքն է եղել: Դահլիճն այնքան էր ջերմ ու սիրալիր, որ համերգի վերջում հուզմունքից դժվարանում էի շնորհակալական խոսքեր ասել»,- իր տպավորությունները կիսեց Ս. Ապրեսյանը:

Տնօրենը նշեց, որ համույթի ակնառու հաջողությունները պայմանավորված են նաեւ գեղարվեստական ղեկավար, Արցախի արվեստի վաստակավոր գործիչ Գարի Ավանեսյանի ջանասիրությամբ ու աշխատանքի հանդեպ ունեցած նվիրումով:

Ի դեպ, Ս. Ապրեսյանը չբացառեց, որ Լիբանանում առաջիկայում նոր համերգներ կունենան, քանզի նման առաջարկներ արդեն իսկ ստացել են:

Սեփ. ԼՐԱՏՎՈՒԹՅՈՒՆ

Այն Հայաստանի կենացը, որ դեռ պիտի գա

(Հոպար Անդոն, Ներսիկը եւ մյուսները...)

Անդո հոպարը (Անդրանիկ Մուրադյան, Արցախյան պատերազմի առաջամարտիկ, Շուշիի առանձնակի գումարտակի անդամ) բաժակները լցնում է կոնյակով:

- Կխմե՞ս, հոպարի աղջիկ:

Ժպտում է:

- Կփորձեմ:

Ժպտում եմ:

- Մալադեց, թե չէ չեմ կարողանա հիշողությունս փորփրել: Գիտես, հոպարը խոսողներից չէ:

Նրա ժպիտը խորհրդավոր երանգ է ստանում: Բարձրացնում է բաժակը, խոսում՝ հոտնկայս.

- Պատերազմի տարիներն ինձ համար ամենաերջանիկ տարիներն էին, ամենամաքուր ու ազնիվ տարիները, քանզի այն ժամանակ դու հստակ գիտեիր, որ քո ընկերոջ հետ կարող ես մարտի գնալ ու նահատակվել, քո ընկերը քեզ չի լքի մարտադաշտում, նա քո թիկունքին կանգնած է, դու էլ՝ նրա: Մեր գործը վեհ էր, որովհետեւ այն նվիրում էր հայրենիքին, ազատությանը:

Հիմա ժամանակները փոխվել են, շատերն են անճանաչելիորեն փոխվել, քչերն են իրենց դեմքը պահպանել, սակայն հենց այդ քչերն են, որ չեն ծախել իրենց հոգիները: Նրանք մինչ օրս ապրում են հայրենիքի նվիրումով, ազնիվ ու շիտակ: Նրանք երբեք չեն լքի հայրենիքը ու երբեք հաղթանակած հայրենիքում պարտվողի կարգավիճակով չեն ապրի. կստեղծեն, կարարեն, իրենց գործը կավանդեն իրենց սերունդներին: Սա է նրանց կյանքի բանաձեւը:

Մի պահ լռում է, աչքերի մեջ փոքրիկ կայծեր են երեւում, որոնք նա փորձում է թաքցնել: Կայծերը մերթ երեւում, մերթ՝ կուլ են գնում: Հոպար Անդոն հուզվել չի սիրում:

- Ինձ համար թանկ են իմ հիշողությունները, քանզի դրանք իմ մեծագույն հարստությունն են, դրանք ինձանից ոչ ոք չի կարող խլել, թալանել: Ամեն Աստծո օրս ապրում եմ այդ հիշողություններով, եւ բացակա ընկերներս ոչ մի պահ չեն լքում ինձ: Նրանք իմ լավագույն խորհրդատուներն են: Եթե ես մի շեղ քայլ անեմ, նրանք ինձ չեն ների, նրանք կնայեն աչքերիս ու կասեն. «Քեզ չսազեց, Անդո, շիտակ ապրիր»:

Նրանց սխրանքների մասին ես պատմել եմ զավակներիս, որպեսզի նրանք էլ իրենց զավակներին պատմեն, որպեսզի մաքուր պահեն նրանց ավանդը եւ գլխաբաց քայլեն ազատագրված հողի վրա: Փառք ընկած տղերքին, եւ երանի այն ապրողներին, ովքեր հայրենիքով են ապրում:

Անդո հոպարը խմում է կանգնած: Ես էլ իբր հետեւում եմ նրա օրինակին:

Քիչ անց զրույցին միանում է հոպար Ներսիկը /Ներսես Դավթյան/:

- Ներսիկ, կխոսե՞ս պատերազմից, աղջիկս ուզում է գրել մեր մասին: Մի հետաքրքիր բան պատմիր:

- Ես հիշողության կորուստ ունեմ, Անդո, մի՞թե չգիտես,- ծիծաղում է Ներսիկը,- ոչինչ չեմ հիշում, ես նյութի համար հաջող հերոս չեմ:

- Լա՛վ, լա՛վ, այսօր դատապարտված ենք խոսելու, Ներսիկ, Հերմինեն երկար ճանապարհ է անցել մեզ հանդիպելու համար:

Լռություն: Նրանք նայում են իրար: Հասկանում են միմյանց: Երբեմն լռությունը բառերից ավելի խոսուն է լինում, երբ հարազատ են մարդկային հոգիները, հազար ու մի թելով իրար կապկպված:

- Է, տարինե՛ր, տարինե՛ր... Քսանից ավելի տարիներ են անցել, բայց տղերքի դեմքերը հիշողությանս մեջ վառ են, նրանցից ամեն մեկը պատմություն է՝ Բեկոր, Կարոտ, Պետո, Վիգեն, Արմեն... Նրանց բանակը շատ մեծ է:

Ներսիկը վառում է ծխախոտը, եւ տխրության ծանր ամպը ծածկում է նրա բարի աչքերը: Նա լուռ ծխում է իր «համբերանքի չիբուխը», եւ ես չեմ համարձակվում խախտել նրա զորավոր լռությունը:

- Հիշո՞ւմ ես Աշանի համերգը, Անդո, հիշո՞ւմ ես ոնց էիր տղերքի հետ երգում, «աստղ» էիր դարձել:

Հանկարծ քահ-քահ ծիծաղում են: Անդո հոպարն ասում է. «Դա գլուխգործոց էր, համերգ՝ պատերազմի տխուր օրերին: Երնեկ այդ օրերին»:

Հետո սկսում է թերթել հիշողությունները. «1992-ի ապրիլն էր, երբ Թալինի մեր դաշնակցական ջոկատը հասավ Աշան՝ Արցախի այդ գողտրիկ գյուղը: Մեզ հետ էին նաեւ Բաղրամյանից մի քանի հոգի, բեյրութահայեր Վիգենը, երկու Գոքորները եւ Սաքոն: Երեսունից ավելի հոգի էինք: Հայրդ՝ Արմենը, որ ղեկավարում էր Աշանի ինքնապաշտպանությունը, Բեկոր-Աշոտին խնդրել էր, որ մի քանի շաբաթով տեղավորվենք Աշանում, մնանք գյուղացիների տներում, համ էլ զինավարժություններ անցկացնենք հին Աշանի տարածքում: Աշանի օրերը լեգենդար օրեր էին: Ընդամենը երեք շաբաթ մնացինք այդ գյուղում, բայց դրանք դարձան պատմություն:

Երբ «ուրալը» հասավ Աշան, աննկարագրելի էր այն ջերմությունն ու սերը, որով գյուղացիները դիմավորեցին տղերքիս. գրկում էին, համբուրում, սեղմում կրծքներին, օրհնում: Թվում էր՝ բոլորս այդ գյուղի զավակներ էինք: Գյուղի մայրերի աչքերում մեր մայրերին գտանք, առաջին իսկ օրից անբացատրելի հարազատությամբ կապվեցինք Աշանին, նրա քար ու քոլին:

Կանայք ամեն օր ճաշ էին պատրաստում մեզ համար եւ հաճախ էլ թաքուն-թաքուն սրբում արցունքները: Մենք նկատում էինք, բայց ցույց չէինք տալիս: Պատերազմ էր, արցունքը դարձել էր սովորական մի բան: Բոլորի աչքերում նույն ցավն էր, նույն տառապանքը, բայց մի հույսի շող կար, որ մարդկանց աչքերում տեսնում էինք: Դա հույսի ու հավատի այն շողն էր, որ ոչ մի բանով չես հանգցնի:

Մի գիշեր չկարողացա հանգիստ գտնել: Ասացի.

- Արմեն, մի բան եմ մտածել, պիտի իրականացնեմ տղերքի հետ: Որոշել եմ գյուղում համերգ կազմակերպել, մեզանից շատերն արմատներով սասունցի են, երգել, պարել գիտեն: Էս գյուղը գոնե մեկ օրով պիտի հանենք սթրեսից:

Արմենը խոսուն ժպտաց (նա հաճախ էր այդպես ժպտում): Ես հասկացա, որ նա ընդունեց իմ առաջարկը: Առավոտ կանուխ տղաներին հայտնեցի որոշմանս մասին:

- Այ տղա, հո գիժ չե՞ս, ի՞նչ համերգ, մարդիկ կռվում են, դու համե՞րգ ես տալիս,- ծաղրեց տարիքով ամենամեծը՝ բիձա Վարդգեսը:

- Չէ, մենք թալինցի ենք, արմատներով՝ սասունցի, բոլորս էլ երգել, պարել գիտենք: Աշանում թեկուզ մի օրով պիտի ուրախությունը թնդա. թե չէ, ո՞վ գիտե, թե վաղը թշնամու գնդակը մեզնից ո՞ւմ կխնայի, ո՞ւմ կխլի:

Տղերքը ստիպված եղան համաձայնել»:

- Անդոն,-խոսեց հոպար Ներսիկը,- մի քանի օրում գյուղի դպրոցականներին էլ ներքաշեց գործի մեջ, սովորեցրեց ազգային երգ ու պարը: Դպրոցականները մեծ սիրով սովորում էին, ու համերգի համար նույնիսկ սկսեցին աֆիշներ գրել, կախեցին գյուղի տարբեր մասերում: Համերգի անհավատալի լուրը հասավ հարեւան Բերդաշեն ու Նոր շեն գյուղերը:

Համերգ, ի՞նչ համերգ: Ոչ նստելու տեղ կար, ոչ էլ կանգնելու: Անդոն երգում ու երգում էր, երգը բալասանի պես թափանցում էր մարդկանց սրտերը, եւ մարդիկ զգում էին երգի բուժիչ ուժը: Ծափահարությունների տարափ էր, ցնծություն: «Նորից, նորից».- գոչում էր բազմությունը: Անդոյի վրա հալ չկար, բայց շարունակում էր նույն երգերը տասն անգամ երգել.

Ձայն տուր, ով ֆեդայ,
Ինչո՞ւ ես տրտում,
Լուռ ու մունջ նստած՝
Երկար մտածում...

Դպրոցականները պարում էին, ձայնակցում:

- Երբեք չեմ մոռանա մանուկների, ծերերի, կանանց ու տղամարդկանց աչքերը: Այդ աչքերը հաղթանակ էին տենչում ու հավատում էին գալիք հաղթանակին,-շարունակեց հոպար Անդոն: Համերգից հետո մի դպրոցական տղա մոտեցավ ու ականջիս փսփսաց. «Անդո քեռի, ես էլ եմ ուզում կռվել, ինձ զենք չե՞ք տա, շատ եմ ուզում»: Ես գրկեցի նրա փոքրիկ գլուխը, համբուրեցի.

- Չէ՛, տղաս, պատերազմը չարիք է, պատերազմ գնում են միայն մեծերը, իսկ քո գործը լավ սովորելն է, որ ազատ ու անկախ հայրենիքիդ համար պիտանի մարդ դառնաս:

- Իսկ պատերազմը ե՞րբ կվերջանա, քեռի:

- Շուտով, շատ շուտով, տղաս,- ասացի:

- Այն ժամանակ է՞լ էսպիսի համերգ կանեք:

- Հա, այն ժամանակ ազգովի կերգենք, տղաս:

«Աշանի օրերից հետո, Աշանից ստացած դրական լիցքերով լի՝ մեր ջոկատն օրեր անց մասնակցեց Շուշիի ազատագրմանը: Շուշիի ազատագրումը դարձավ մեր հաղթանակի լուսապսակը, ազատագրված Շուշիում թեւածեց ազգային երգն ու պարը, բացվեց հաղթանակ տանող ճանապարհը: Ցավոք, շատ ընկերներ այդ հաղթանակը չհասցրին տեսնել»,- կես ուրախ, կես թախծոտ ասաց Ներսիկը:

- Այս բաժակն էլ խմենք, Ներսիկ, թող սա էլ լինի այն մեծ նպատակի կենացը, որ ապրում է յուրաքանչյուրիս սրտում. այն վառ նպատակի, որ ունեին մեր հեռացած ընկերները: Տա Աստված, որ մեր ու նրանց երազը մի օր իրականանա: Ուզում եմ, որ դու էլ հավատաս այդ նպատակին, աղջիկս: Այն Հայաստանի կենացը, որ դեռ պիտի գա՝ Ազատ, Անկախ, Միացյալ Հայաստանի կենացը...

Հերմինե ԱՎԱԳՅԱՆ

Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի բարեփոխումների մասին

Լրացավ Հայ Առաքելական Եկեղեցու Արցախի թեմի վերաբացման 25-ամյակը:

Թեմը՝ Տ. Պարգեւ արքեպիսկոպոս Մարտիրոսյանի առաջնորդությամբ, իր նշանակալից ավանդն է ներդրել Արցախյան-ազատագրական շարժման եւ պատերազմի փառավոր հաղթանակի համար:

Արցախում նորոգվել ու վերաբացվել են մոտ երեսուն վանքեր, եկեղեցիներ, կառուցվել են տասից ավելի եկեղեցիներ ու մատուռներ, սակայն խիստ անբավարար է հոգեւոր սպասավորների քանակը, ովքեր կոչված են, հավատացյալների հետ միասին, շունչ եւ ոգի հաղորդելու այդ քարեղեն կոթողներին:

Արցախի ազգային-հոգեւոր եւ պատմամշակութային արժեք ներկայացնող Դադիվանքում, Գանձասարի եւ Ամարասի վանքերում չկան վանահայրեր: Դադիվանքում անգամ քահանա չկա, իսկ Եղիշե Առաքյալի (Ջրվշտիկ) վանքը մատնված է անուշադրության՝ դեռ չի նորոգվել: Նշված վանքերում գտնվում են մի շարք սրբերի, երեւելիների, աշխարհիկ եւ հոգեւոր իշխանավորների մասունքներ: Դադիվանքում եւ Եղիշե Առաքյալի վանքում են ամփոփված Հիսուսի 72 առաքյալներից երկուսի՝ Դադիի եւ Եղիշեի մասունքները: Եղիշե Առաքյալի վանքի եկեղեցու շուրջը տեղակայված 2 մատուռներից մեկում թաղված է Վաչագան Բարեպաշտ արքան, մյուսում՝ Ջրաբերդի իշխան Ատոմը: Գանձասարի վանքի եկեղեցու զոհասեղանի տակ թաղված է Սուրբ Հովհաննես Մկրտչի գլուխը: Այնտեղ են գտնվում նաեւ Տեառնեղբայր Հակոբ առաքյալի, Զաքարիա մարգարեի, Սուրբ Գեւորգի, Պանդալիոն բժշկի, Աղվանից Գրիգորիս Ա կաթողիկոսի մասունքները, իսկ վանքի գավիթում թաղված են Աղվանից կաթողիկոսների աճյունները:

Ամարասի վանքում է գտնվում Գրիգոր Լուսավորչի թառան՝ Աղվանից առաջին կաթողիկոս Սուրբ Գրիգորիսի դամբարանը:

Քրիստոնյա հավատացյալներին (եւ ոչ միայն) հայտնի է սուրբ մասունքների զորությունը: Դրանց պղծումը, անարգումը, անգամ արհամարհումն ու անուշադրության մատնումն արժանանում են Ամենազորի պատժին:

Ցավով պետք է նշենք, որ Արցախում վանական կյանք ընդհանրապես գոյություն չունի: Վերաբացված եւ նոր կառուցված շատ եկեղեցիներում ամիսներով (երբեմն նաեւ տարիներով) հոգեւոր արարողություններ չեն կատարվում:

Ներկա դրությամբ Հայ Առաքելական Եկեղեցու կարեւոր խնդիրը հոգեւոր սպասավորների պակասն է: Այն անպայմանորեն պետք է հանդիսանա համայն հայության գերխնդիրներից մեկը, քանի որ Հայ Եկեղեցին, լինելով համազգային ամենամեծ կառույցը, նշված պատճառով չի կարողանում լիարժեքորեն գործել եւ կատարել Սահմանադրությամբ իրեն վերապահված «բացառիկ առաքելությունը հայ ժողովրդի հոգեւոր կյանքում, նրա ազգային մշակույթի զարգացման եւ ազգային ինքնության պահպանման գործում»: Դրա իրագործումը, բնականաբար, կախված է հոգեւոր կադրերի քանակական ու որակական չափանիշներից եւ, իհարկե, նպատակաուղղված համակարգված աշխատանքից: Հոգեւոր բնագավառում քանակականի եւ որակականի փոխկապակցվածությունը, ինչպես նաեւ որակականի հաշվին քանակականի պակասի լրացումը համեմատելի չէ այլ բնագավառների հետ: Օրինակ, Արցախյան պատերազմի տարիներին Հայոց փոքրաթիվ բանակը իր որակական բարձր հատկանիշների, մարտական ոգու շնորհիվ եւ Աստծո ողորմությամբ կարողացել է հաղթել թվաքանակով իրեն բազմիցս գերազանցող ադրբեջանական բանակին: Բայց, ահա, նույնը հնարավոր չէ կատարել հոգեւոր բնագավառում: Անգամ ամենաուսյալ տասը քահանաներով քառասուն եկեղեցիներում հնարավոր չէ համաժամանակյա Սուրբ Պատարագ կամ ժամերգություն կատարել: Նման արարողությունների համար՝ բացի քառասուն քահանայից, հարկավոր են նաեւ նույնքան սարկավագներ, դպիրներ եւ երգչախմբեր:

Ուստի Հայ Եկեղեցու հոգեւր սպասավորների հարցը հրատապ լուծում է պահանջում: Իսկ ի՞նչ է արվում այդ ուղղությամբ: Արցախի պարագայում, կարելի է ասել, որ գործը առաջ չի գնում, դեռ ավելին՝ քահանաների թվաքանակը քանի գնում՝ նվազում է: Հարցին կարող էր իր լուծումն առաջարկել Գանձասարի հոգեւոր դպրանոցը, բայց այն չի գործում, ծառայելու է որպես մատենադարան: Ինչ մնում է Էջմիածնի Գեւորգյան ճեմարանի եւ մյուս հոգեւոր կրթօջախների կողմից պատրաստվող սաներին (յուրաքանչյուր տարի՝ հիսուն շրջանավարտ, հիմնականում՝ սարկավագներ) առնվազն հիսուն տարի են պետք, որ բավարարվեն օրեցօր աճող Հայ Եկեղեցու հավատացյալների հոգեւոր պահանջները: Ո՞րն է ելքը: Իմ կարծիքով՝ գերխնդիրը կարելի է լուծել բազմաշերտ հոգեւոր կրթական համակարգ ստեղծելու միջոցով: Նախկին՝ ԽՍՀՄ կրթական համակարգի օրինակով կարելի է ստեղծել հոգեւոր ուսումնարաններ՝ երկու տարի ժամկետով, ինստիտուտներ՝ չորս տարի ժամկետով եւ ճեմարան՝ վեց տարի ժամկետով: Հոգեւոր ուսումնարանների սաներին պայմանագրային հիմունքներով պետք է ընդունել պարտադիր զինծառայությունն ավարտած այն քաղաքացիներին, որոնց բնակավայրերում կան գործող եկեղեցիներ: Ցանկալի է, որ յուրաքանչյուր բնակավայրից ընտրվեն երկուական սաներ: Հոգեւոր ուսումնարանները «լավ» եւ «գերազանց» գնահատականներով ավարտած շրջանավարտներին միանգամից պետք է ձեռնադրել քահանաներ եւ ուղարկել իրենց բնակավայրերը:

Հոգեւոր ինստիտուտների շրջանավարտներին պետք է ձեռնադրել քահանաներ եւ պայմանագրային հիմունքներով գործուղել Հայաստանի եւ աշխարհի այլ երկրների ՀԱԵ եկեղեցիները:

Կարծում եմ՝ հոգեւոր ճեմարանների մասին գրելն ավելորդ է, այն պարզ պատճառով, որ դարերի ընթացքում ձեւավորված եւ կյանքի փորձությանը դիմացած հոգեւոր-ուսումնական այդ հաստատություններն իրենք են վկայում իրենց մասին:

Հաջորդ խնդիրը, որը եւս լուծում է պահանջում, դա եկեղեցիների երգչախմբերն են: Այն կարելի է լուծել ՀԱԵ Արցախի թեմի եւ ԼՂՀ կրթության եւ գիտության նախարարության համագործակցության միջոցով: Երաժշտական ուսումնարանի վոկալի բաժնի շրջանավարտներին պայմանագրային հիմունքներով պետք է գործուղել այն բնակավայրերի դպրոցները, որտեղ կան գործող եկեղեցիներ: Նրանք աշխատելով դպրոցներում՝ որպես երաժշտության ուսուցիչներ, միաժամանակ կստեղծեն եկեղեցական երգչախմբեր՝ ընդգրկելով դպրոցի աշակերտներին, ինչպես նաեւ գյուղի երաժշտական շնորհով օժտված անձանց: Ցանկալի է, որ Արցախի թեմի ՔԴԿ-ն ունենա մասնագիտացված հոգեւր շրջիկ երգչախումբ եւ օգնի գյուղերում ստեղծվող երգչախմբերին:

Պարզ է, որ ցանկացած գործ ձեռնարկելիս պարտադրաբար առաջանում են ֆինանսական խնդիրներ: Կարծում եմ՝ օրենսդրորեն կարգավորելով Հայկական պետություն եւ Հայ Եկեղեցի փոխհարաբերությունը, կարելի է լուծել նաեւ այդ խնդիրը, ինչպես կատարվում է մեր հարեւան Վրաստանի Հանրապետությունում: Վրաստանի կառավարության կողմից Վրաց Ուղղափառ Եկեղեցու ֆինանսավորումը սկսվել է 2002-ից: Ֆինանսավորման սկզբից մինչեւ 2013թ. ներառյալ՝ Վրաց Եկեղեցու պատրիարքարանը պետությունից ստացել է 160,672,200 լարի (37 միլիարդ 400միլիոն դրամ): Իսկ 2014թ. պետական բյուջեով նախատեսված է տրամադրել 25.000.000 լարի (5 միլիարդ 825 միլիոն դրամ): Վրաստանի Կառավարությունը պահուստային ֆոնդից 2014-ին չորս կրոնական միավորումներին (Հռոմեական-Կաթոլիկ, Հայ Առաքելական, Իսլամական եւ Հրեական) ֆինանսավորման համար հատկացնելու է 4.5 միլիոն լարի (1 միլիարդ 49 միլիոն դրամ): Կառավարության դրույթի համաձայն՝ «Խորհրդային միապետական ռեժիմից կրած վնասի մասամբ փոխհատուցումը» կիրականացվի Կրոնական հարցերով պետական գործակալության կողմից, յուրաքանչյուր կրոնական միավորմանը տրամադրելով 1125000 լարի (262միլիոն 125 հազար դրամ):

Կարծում եմ՝ մեկնաբանություններն ավելորդ են:

Այո՛, հայկական պետությունը պետք է պետական բյուջեից համապատասխան դրամական միջոցներ հատկացնի Հայ Եկեղեցուն՝ հայկական ամենամեծ ազգային կառույցին, որ վերջինս կարողանա կատարել Սահմանադրությամբ եւ այլ օրենքներով իրեն վերապահված ազգի հոգեւոր կյանքի շինության եւ ազգապահպանության առաքելությունը:

Թերեւս, ՀԱԵ Արցախի թեմի ամենախոցելի տեղը եկեղեցական ծխական համայնքներն են: Իմ կարծիքով՝ դա Արցախի թեմի Թեմական խորհրդի թույլ աշխատանքի եւ վերահսկողության բացակայության հետեւանքն է: Արցախի թեմում թույլ են իրականացվում հոգեւոր-տեսչական աշխատանքները: Հոգեւոր-քարոզչության անմխիթար վիճակի մասին բազմիցս ենք գրել եւ առաջարկել կոնկրետ իրատեսական լուծումներ:

Գաղտնիք չէ, որ Արցախի թեմի Քրիստոնեական դաստիարակչական կենտրոնի վատ աշխատանքի հետեւանքով է նաեւ Արցախի Հանրապետությունում աճել աղանդավորականների եւ այլ խորթ կրոնական կազմակերպությունների հավատացյալների թվաքանակը: Ուստի առաջարկում ենք Արցախի թեմում կատարել բարեփոխումներ: Այդ ուղղությամբ առաջարկում ենք.

ա. Ստեղծել հոգեւոր-տեսչական, քննչական խումբ եւ վեր հանել Արցախի թեմում առկա բոլոր թերությունները:

բ. Ստեղծել լիարժեք աշխատող Քրիստոնեական դաստիրակչության կենտրոն (ՔԴԿ)՝ իր շրջանային ստորաբաժանումներով եւ կառույցներով:

գ. Արցախի բոլոր շրջկենտրոններում ստեղծել ՔԴԿ-ի գրասենյակներ, Հայրոդաց տներ եւ Տիկնանց միություններ:

դ. Օժանդակել Արցախի թեմի եկեղեցասիրաց երիտասարդական կառույցի բնականոն գործունեությանը:

ե. Ստորագրել ՀԱԵ Արցախի թեմի եւ Արցախի Հանրապետության կառավարության միջեւ համապատասխան պայմանագիր:

զ. ՔԴԿ-ի միջոցով վերահսկել Արցախի կրթական համակարգում իրականացվող «Հայ Եկեղեցու պատմություն» առարկայի դասավանդումը: Հանրակրթական դպրոցներում վերսկսել «Կրոն» առարկայի դասավանդումը:

է. Արցախի այն բնակավարերում, որտեղ կան գործող եկեղեցիներ, ստեղծել համայնքային ծխական խորհուրդներ:

Աշոտ ՍԱՐԳՍՅԱՆ

«Ապառաժ» երկշաբաթաթերթ
Ստեփանակերտ, Կնունյանց 17,
հեռ. 97 38 43, E-mail: info@aparaj.am
Կայքէջ՝ www.aparaj.am

Նյութերի համար պատասխանատու են հեղինակները: Թերթը կարող է տպագրել նաեւ նյութեր, որոնցում արծարծված տեսակետները չի կիսում:
Տպագրվում է Ստեփանակերտի «ԴԻԶԱԿ ՊԼՅՈՒՍ» ՍՊԸ-ում:
Գրանցման վկայական՝ 04: Տպաքանակը՝ 500: Գինը՝ 100 դրամ:

Խմբագիր
Ալեսյա Բեջանյան